«Ծիածան» ԱԿԿ ՀԿ

<<Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում >>

Նախադպրոցական կրթություն հասանելիության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն

Սույն սոցիոլոգիական հետազոտության վերլուծությունը իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Կապան 2019

Ներածություն

Նախադպրոցական կրթությունը երեխայի զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Երեխայի կյանքի առաջին տարիներն էական նշանակություն ունեն ոչ միայն նրա առողջության և ֆիզիկական զարգացման, այլև նրա սովորելու ունակության, հուզական աշխարհի և սոցիալական հմտությունների ձևավորման համար: Համաձայն UNICEF –ի ուսումնասիրության Հայաստանի 0-6 տարեկան երեխաների 70 տոկոսը մնակապարտեզ չի հաճախում: Պատճառներից մեկն այն է, որ բազմաթիվ փոքր ու հեռավոր համայքներում նախադպրոցական հաստատություններ չկան: Կազմակերպության զեկույցում նշված է նաև, որ 2000 թվականից ի վեր՝ նախադպրոցական կրթական համակարգում ընդգրկվածությունն ավելացել է գրեթե 1/3-ով: Նախատեսվում էր, որ հինգ տարեկան երեխաների համախառն ընդգրկվածության հարաբերակցությունն 2000 թվականի 35%-ի համեմատ ավելանալու է՝ 2017 թվականին հասնելով 90%: Չնայած այս ձեռքբերմանը՝ վերջին տարիներին առաջընթացը դանդաղել է և անհավասարությունները շարունակում են մնալ խնդիր:

Ընդհանուր հանրապետական ցուցիչների համեմատությամբ Կապանում նախադպրոցական կրթության իրավիճակը բավականին լավ է: Կապան խոշորացված համայնքում 2019 հունվարի դրությամբ բնակվում է 9302 երեխա, որոնցից 2035 նախադպրոցական տարիքի է: Նախադպրոցական հաստատություններ են հաճախում 1476 երեխա, ևս 365 հերթագրված է սակայն չեն հաճախում: Համաձայն այս տվյալների համայնքի երեխաների 72,5 %-ը հաճախում է մանկապարտեզ, սակայն այս թվի գերակշրող մասը կազմում են քաղաքաբնակ երեխաները, գյուղական 37 բնակավայրերից միայն հինգում են գործում նախակրթական հաստատություններ: Դրա հիմնական պատճառը բնակավայրերում բնակչության հատկապես 0-5 տերական երեխաների շատ փոքր թիվն է:

Հետազոտության նպատակներն են ուսումնասիրել.

- ✓ Նախադպրոցական կրթության վերաբերյալ 0-5 տարեկան երեխաների ծնողների կարծիքները
- ✓ Մանկապարտեզ չհաճախելու պատճառները
- ✓ Բնակչության իրազեկվածությունը նախադպրոցական կրթության այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարության միջնաժամկետ ծրագրի մասին
- ✓ Ծրագրով առաջարկվող մոդելների նախապատվությունը

Հետազոտությունը իրականացվել է երկու փուլով՝ Ֆոկուս խումբ և հարցաթերթիկային հարցում մեթոդներով:

Հարցմանը մասնակցել է Կապան քաղաքի և գյուղական՝ Գեղանուշ, Վարդավանք, Արծվանիկ, Աճանան,Սյունիք, Վերին Խոտանան, Սրաշեն, Եղվարդ, Դավիթբեկ, Ծավ, Շիկայող, Վաճագան բնակավայրերի 290 բնակիչ, ում երեխաները չեն հաճախում մանկապարտեզ: Հարցման մասնակիցները ըստ բնակավայրերի.

1. Կապան.....202
2. Գեղանուշ.....8
3. Վարդավանք.....9
4. Արծվանիկ.....7
5. Աճանան.....8
6. Սյունիք.....17
7. Վերին Խոտանան.....3
8. Սրաշեն.....1
9. Եղվարդ.....9
10. Դավիթբեկ.....16
11. Ծավ.....1
12. Շիկայող.....4
13. Վաչագան.....5

Ըստ հարցման արդյունքների ընտանիքներում հիմնականում ունեն մեկ կամ երկու երեխա:



Ինչպես վերը նշվել էր հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը Կապան քաղաքի բնակիչներ են, այդ պատճառով 77.9%-ը նշել են, որ համայնքում

մանկապարտեզ կա: Մանկապարտեզ չկա Գեղանուշում, Վարդավանքում, Աճանանոում, Վերին Խոտանանում, Սրաշենում, Շիկահողում, Վաչագանում: Եղվարդում գործում է նախակրթարան, որը ստեղծվել է UNICEF –ի <Քայլ առ քայլ> ծրագրի շրջանակում, մասնագետները չեն վարձատրվում, կամավորության սկզբունքով ապահովում են համայնքի երեխաների օրական մի քանի ժամվա զբաղվածությունը :

Մանկապարտեզ չհաճախող երեխաների զգալի մասը 83.3 %-ը երկու տարեկան են և ավելի փոքր:



Հատկանշական է, որ 13 երեխայի ծնող նշել է, որ երեխան չի հաճախում մանկապարտեզ, որովհետև հատուկ կարիքով է, այս ցուցիչը վերաբերվում է միայն քաղաքին , իսկ 25-ը՝ որովհետև տանը պահող ունեն/ Սյունիք, Դավիթբեկ/:



Ծնողների 43%-ը երեխաներին կտանի մանկապարտեզ, եթե մոտակայքում լինի, 27,4%-ը եթե բարելավվեն մոտակա մանկապարտեզի պայմանները, 15,2%-ը եթե

լինեն ալտերնատիվ կարճաժամկետ հաստատություններ և միայն 1.1 %-ը ոչ մի դեպքում չի տանի:
Հուսադրող է, որ ծնողների 90.7%-ը շատ կարևոր են համարում նախադպրոցական կրթությունը և միայն 0.3 %-ը համարում է, որ բոլորովին կարևոր չէ:



Հարցման նպատակներից էր իրազեկել ծնողներին, հատկապես գյուղական բնակավայրերում ապրողներին, նախադպրոցական կրթության այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարության միջնաժամկետ ծրագրի մասին: Նախադպրոցական կրթության այլընտարնքային մոդելները նույնպես ներկայացվել են հարցման և ֆոկուս խմբերի մասնակիցներին և իրենց հետ քննարկվել է դրանց արդյունավետությունը: Այդ պատճառով հարցման մասնակիցների 70%-ը նշել են, որ տեղյակ են և հավանում են այդ ծրագիրը:
Հարցվածների 28,3 %-ը նշել է, որ կարևոր չէ, որ մոդելը կընտրվի իրենց համայնքի համար, միայն թե իրականացվի երեխաների կրթությունը, իսկ 11%-ը համարում է, որ այս մոդելները հարմար չեն իրենց բնակավայրին:
Հատկապես հավանության է արժանացել երրորդ մոդուլը՝ ամբողջ օր, համայնքահեն տարբերակը:
Այս տարբերակը հնարավոր է կիրառել, եթե համայնքը ունի ամբողջ օրով նախադպրոցական կրթություն տրամադրելու հնարավորություն: Նպատակահարմար է կիրառել, եթե համայնքում առկա է գործող համայնքային հաստատություն/ համայնքապետարան, մշակույթի կենտրոն: Քանի որ ծառայությունը տրամադրվում է ամբողջ օրով, պետք է ապահովել քնելու հարմարություն երեխաների համար: Տարիքային խումբը 3-6 տարեկաններ/ խառը տարիքային խմբեր, տևողությունը՝ 8 ժամ, սնունդը՝ 3 անգամյա, ղեկավարումը՝ համայնքի կողմից



Ըստ հաջորդականության բնակիչները հետաքրքիր են համարել նաև համայնքահեն հետևյալ տարբերակները

Մոդուլ 1,Տարբերակ 1/ 3,5-4 ժամ

Նորաստեղծ կարճօրյա/ /ծառայություն: Համայնքի միջոցներով երեխաներին տրվում է մեկանգամյա թեթև նախաճաշ, որի կազմակերպումը կատարվում է ծնողների կողմից: Վերանորոգվում է տարածքը, տրամադրվում են ուսումնական և դիդակտիկ պարագաներ, վերապատրաստվում են մասնագետները/ ծնողներ կամ համայնքի բնակիչներ/

Տարբերակ 2 / 4-5 ժամ, համայնքահեն/

Նորաստեղծ կարճօրյա/ 4-5 ժամ/ծառայություն: Այս մոդելը կարելի է կիրառել, եթե համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների թիվը փոքր է և համայնքը չունի շատ միջոցներ լիարժեք մանկապարտեզ ունենալու համար: Նպատակահարմար է կիրառել, եթե համայնքում առկա է գործող համայնքային հաստատություն/ համայնքապետարան, մշակույթի կենտրոն: Տարիքային խումբը 3-6 տարեկաններ/ խառը տարիքային խմբեր, սնունդը՝ խորտիկ, ղեկավարումը՝ համայնքի կողմից:

Հարցման մասնակիցների ժողովրդագրական տվյալները









Ֆոկուս Խմբային քննարկման արդյունքների վերլուծություն

Կապան խոշորացված համայնքի Աճանան, Վարդավանք և Գեղանուշ բնակավայրերում կազմակերպվել են ֆոկուս խմբային քննարկումներ, որին մասնակցել են համայանքի 0-5 տարեկան երեխաների ծնողները, բնակավայրերի վարչական ղեկավարներ, բնակիչները /ընդամենը 24 մարդ, յուրաքանչյուրում 8 մասնակից/:

Երեք բնակավայրերում նախադպրոցական կրթության իրավիճակը և խնդիրները նույնն են: Նախակրթարանի բացակայության պատճառով երեխաները զրկված են իրենց տարիքին համապատասխան բազմակողմանի զարգացման հնարավորությունից: Գեղանուշի 15 երեխայից 2-ը հաճախում է Կապան քաղաքի ՆՈՒՀ-եր, Աճանանի 9 երեխայից 4-ը հաճախում Կապան քաղաքի և Սյունիքի բնակավայրի ՆՈՒՀ -եր, Վարդավանքի 9 երեխան նախակրթարան չեն հաճախում բնակավայրի հեռավորության և ծնողների սոցիալական ծանր վիճակի պատճառով:

Նախակրթարանի բացակայությունը բացասաբար է ազդում ինչպես երեխաների զարգացման նաև ծնողների կենսամակարդակի վրա: Տնտեսության զարգացման՝ հողագործությամբ կամ անասնապահության զբաղվելու համար անհրաժեշտ ժամանակ և հնարավորություն չունեն, որովհետև երեխաներին պահող չունեն: Վարդավանքի հայրիկներից մեկը նշեց, որ եթե երեխաներին պահող լինի, կինը կօգնի իրեն, ավելի շատ կով կպահեն, տնտեսությունը կզարգաղցնեն, թե չէ հիմա ինքը մենակ չի հասցնում:

Քննարկման մասնակիցները հատկապես կարևորեցին երեխաների զարգացման սահմանափակ հնարավորությունները: <Մեր երեխաները քաղաքի երեխաների համեմատ ավելի ամաչկոտ են, շփվող չեն, դժվար են ուրիշների հետ ծանոթանում, մերվում> :Երեխաները առաջին դասարան են գնում բոլորովին անպատրաստ, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում թե ծնողների, թե ուսուցիչների համար: Չնայած գյուղական դպրոցներում աշակերտների փոքր քանակի պատճառով այդ խնդիրները արագ հարթվում են, սակայն երեխաների հետագա զարգացման համար բացասական հետևանքներ են ունենում:

Գեղանուշ և Աճանան բնակավայրերում առաջարկություն եղավ նախակրթարանը բացել գործող միջնակարգ դպրոցներում, որոնք ունեն գույք, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ,գործող ճաշարան՝ տաք սննդով, ննջարանների հնարավորություն: Վարդավանք բնակավայրում նախատեսում է խմբասենյակ հիմնել գյուղապետարանի հարակից տարածքում, որը պետք է վերանորոգվի և համապատասխանեցվի նախակրթարանի պահանջներին:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ այս պահին բնակավայրում համապատասխան մասնագետներ չկան, սակայն ծնողներից շատերը պատրաստակամություն հայտնեցին վերապատրաստվելու և աշխատելու ապագա նախակրթարանում: <Մեծ ուրաձությամբ կմասանկցենք վերապատրաստումներին: Մեր երեխաների համար է, ինչքան կարողանանք կօգնենք և կաշխատենք նրանց համար: Կշահեն մեր երեխաներն էլ, գյուղի բոլոր երեխաները և իրենց ծնողները> Վարդավանք համայնքի մայրիկ:

Քննարկման մասնակիցներին ներկայացվեց ՀՀ Կառավարության ընդունած 2019-2021 պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի բաղադրիչ հանդիսացող նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության այլանտրանքային մոդելները:

Գեղանուշ և Աճանան բնակավայրում առավել հարմար են համարել մոդել 3-ի. Տարբերակ 2-ը / 3-4 ժամ/:

Նպատակահարմար է իրականացնել, եթե համայքնում կա հանրակրթական դպրոց և չկան նախադպրոցական հաստատություններ: Առաջարկվող տարբերակը ֆինանսավորվում է դպրոցների ֆինանսավորման երեխա-թվով տրամաբանությամբ և բանաձևով և հետևաբար ֆինանսավորումը տրամադրվում է ըստ ուսումնական հաստատության ենթակայության: Սնունդը՝ խորտիկ, ղեկավարումը դպրոցի կողմից, քնելու հնարավորությունը բացակայում է : Երեխաների առավելագույն քանակը՝ 30 .

Հաշվի է առնվել, որ բնակավայրերում կան գործող դպրոցներ, համապատասխան տարիքի երեխաներ:

Վարդավանքում առաջարկվեց առավել հարմար են համարել մոդել 1-ի. Տարբերակ 2-ը / 4-5 ժամ, համայնքահեն /:

Նորաստեղծ կարճօրյա/ 4-5 ժամ/ծառայություն: Այս մոդելը կարելի է կիրառել, եթե համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների թիվը փոքր է և համայնքը չունի շատ միջոցներ լիարժեք մանկապարտեզ ունենալու համար: Նպատակահարմար է կիրառել, եթե համայնքում առկա է գործող համայնքային հաստատություն/ համայնքապետարան, մշակույթի կենտրոն: Տարիքային խումբը 3-6 տարեկաններ / խառը տարիքային խմբեր, սնունդը՝ խորտիկ, ղեկավարումը ՝ համայնքի կողմից:

Հաշվի է առնվել, որ նախկին գյուղապետարանին կից տարածք ունեն, որը նախկինում ծառայել է որպես բուժկետ, ժամանակին վերանորոգված է եղել, այժմ թեթև նորոգումից հետո կարող է նախակրթարան դառնալ:

Երեք բնակավայրերում շեշտեցին, որ կարևոր չէ ինչ մոդել կընտրվի, միայն թե երեխաները ժամանցի և կրթության հնարավորություն ունենան, ինչը առավել մեծ խնդիր է հեռավոր և սակավաթիվ բնակչություն ունեցող համայնքների համար: Դրանից է կախված նաև երիտասարդ ընտանիքների գյուղում մնալու կամ գյուղ վերադառնալու հարցը: Շատերը հեռանում են գյուղից, ոչ միայն ֆինանսական և նյութական խնդիրների այլ նաև երեխաների զարգացման հնարավորությունների պակասի պատճառով:

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին կառավարության նախաձեռնությունը այլընտրանքային նախադպրոցական կրթության իրականացման վերաբերյալ և պատրաստակամություն հայտնեցին իրենց հնարավորությունների և կարողությունների սահմաններում հնարավորինս աջակցել իրականացմանը :

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հարցումները, դիտարկումները և փաստաթղթերի վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել.

Չնայած Կապան քաղաքի և մոտակա համեմատաբար խոշոր գյուղերի երեխաների համար նախադպրոցական կրթությունը հիմնականում հասանելի է, սակայն ունենք մեծ քանակությամբ երեխաները, ովքեր չեն հաճախում մանկապարտեզ: Գյուղական բնակավայրերում երեխաների թվի սակավությամբ է պայմանավորված նախակրթարանների բացակայությունը, սակայն այլընտրանքային մոդելները հնարավորություն են տալիս նույնիսկ փոքր թվով երեխաների համար ստեղծել վաղ մանկական զարգացման պայմաններ: Կապանում մեծ թիվ են կազմում մինչև երեք տարեկան երեխաները, ովքեր գրանցվել են, սակայն չեն հաճախում մանկապարտեզներում տեղերի սահմանափակության պատճառով: Ծնողների մեծ մասը կարևորում է երեխաների նախադպրոցական կրթությունը, փոքր թիվ են կազմում նրանք, ովքեր համարում են, որ երեխաները տնային պայմաններում ավելի լավ են խնամվում: Մանկապարտեզների ոչ բավարար պայմանները, որպես չհաճախելու պատճառ նշվել են միայն Կապան քաղաքի փոքրաթիվ մանկապարտեզներում և Դավիթբեկ գյուղում: Մտահոգիչ է, որ չնայած ներառական կրթության վերաբերյալ լայնածավալ քարոզչությանը, հատուկ կարիքներով երեխաներին մանկապարտեզ ծնողները գերադասում են երեխաներին մանկապարտեզ չտանել: Պատճառը այն է որ, ինչպես մանկապարտեզները այնպես էլ ծնողների պատրաստ չեն ընդունելու հատուկ կարիքներով երեխաներին:

Մանկապարտեզ չհաճախող երեխաների ծնողների համար նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելների կիրառումը կարող է իրենց խնդիրների լուծման լավ հնարավորություն դառնալ: Կառավարության կողմից առաջարկված մոդելներից հատկապես օգտակար և կիրառելի են համարվել համայնքահեն 3-5 ժամ խնամք և կրթություն ապահովող մոդելները, որոնք իրենց բնույթով շատ նման են գործող մանկապարտեզներին:

Որպես հետզոտության կարևորագույն եզրահանգում կարելի է նշել նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելների կիրառման անհրաժեշտությունը և արդյունավետությունը, հատկապես գյուղական սակավաթիվ բնակչություն ունեցող համայնքների համար: Գործող մանկապարտեզներում նոր մեթոդաբանության, նոր մոդելների կիրառումը կարող է նշանակալիորեն բարելավել երեխաների կրթության գործընթացը և ծախսարդյունավետ դարձնել նախակրթարանների աշխատանքը:

Ծրագրի սոցիոլոգ՝ *Անուշ Մեժլումյան*